ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Р Е Ц Е Н З И И

«Բաներեր Հայաստանի արխիվների», Հայկական ՍՍՌ ՆԳՄ Արխիվային վարչության օրգան, № 1, Երևան, 1960, 240 էջ, գինը 7 ռ. 50 կ.:

Վերջերս լույս տեսավ Հայկական ՍՍՌ Ներքին գործերի մինիստրության Արխիվային վարչության օրգան «Բաներեր Հայաստանի արխիվների» հանդեսը, որը «կոչված է գիտական շրջանառության մեջ դնելու հայ ժողովրդի պատմության, հատկապես Սովետական Հայաստանի վերաբերյալ արխիվային դոկումենտալ նյութեր»։

Հանդեսի խմբագրությունը, ինչպես ասված է առաջին համարի ներածականում, ծրագրել է «Բաներերում» տպագրել արխիվային վավերագրերի հավաքածուներ, ինչպես նաև արխիվային փաստաթղթերի հիման վրա գրված գիտական հոդվածներ, ինֆորմացիաներ, որոնք կարտացոլեն հայ ժողովրդի պատմությունը, Սովետական իշխանության համար նրա մղած պայքարը, նրա բարեկամությունը և փոխադարձ կապերը մյուս ժողովուրդների հետ, Սովետական Հայաստանի տնտեսության, կուլտուրայի, գիտության և արվեստի զարգացման ուղղությամբ հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումները։ Բացի այդ, «Բաներերի» էջերում տպագրվելու են Հայաստանի արխիվներում պահվող արխիվային նյութերի թեմատիկ և ֆոնդային տեսություններ, համառոտ տեղեկատու ցուցակներ, որոնք կբացահայտեն ռեսպուբլիկայի արխիվներում պահվող արխիվային ֆոնդերի բովանդակությունը։ Հանդեսում կտպագրվեն նաև դրախոսություններ՝ Հայկական ՍՍՌ արխիվների նյութերի հիման վրա դրված հրատարակությունների վերաբերյալ։

«Բաներեր Հայաստանի արխիվների» հանդեսը մի կողմից կնպաստի արխիվային շինարարության հետագա զարգացմանը Հայաստանում, մյուս կողմից տպագրելով չհրապարակված արխիվային նյութերը, կօգնի սովետահայ պատմագիտությանը։

Հանդեսի առաջին համարը բացվում է Սովետական Հայաստանի արխիվային շինարարության արդի խնդիրներին նվիրված հոդվածով («Արխիվային շինարարությունը Հայաստանում 1960—1965 թթ.»)։ Հոդվածագիր Վ. Կզարթմյանը, որ Հայկական ՍՍՌ ՆԳՄ Արխիվային վարչության՝ պետն ու «Բաներեր Հայաստանի արխիվների» հանդեսի խմբագիրն է, նշում է, որ Սովետական Հայաստանի արխիվային շինարարության արդի, առաջնահերթ, հրատապ խնդիրներն են՝ ապահովել արխիվային փաստաթղթերի պահպանումը, կենտրոնացնել հայ ժողովրդի պատմության վերաբերյալ փաստաթղթերը և օգտագործել դրանք Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության, գիտության ու կուլտուրայի հետագա զարգացման նպատակների համար։

Վ. Կզարթմյանի հոդվածը փաստորեն մի համառոտ հաշվետվություն է Հայաստանի արխիվների անցած գործունեության և մոտակա տարիների անելիքների մասին։ Հոդվածից տեղեկանում ենք, որ Սովետական Հայաստանի կառավարությունը զգալի նյութական միջոցներ է հատկացրել արխիվային գործի բարելավման, կադրերի պատրաստման ու որակավորման համար։ «Երևանում, Լենինականում և ռեսպուբլիկայի մի շարք արդյունաբերական վայրերում կառուցվելու են նոր շենքեր արխիվների համար»,— հաղորդում է հեղինակը և ապա թվարկում այն միջոցառումները, որոնք ուղղված են արխիվային փաստաթղթերը անեղծ պահելու, եղծված արխիվային փաստաթղթերը վերականգնելու, Հայաստանում գործող արխիվների աշխատանքը կոորդինացնելու, ռեսպուբլիկայից դուրս գտնվող արխիվների հետ կապերի մեջ մտնելու, այդ արխիվներից հայ ժողովրդի պատմությանը վերաբերող նյութերը կամ դրանց ֆոտոպատճենները ստանալու, կենտրոնացնելու և դրանք սիստեմատիկաբար հրատարակելու նպատակին։

Հանդեսի առաջին համարի փաստաթղթերի հրապարակման բաժնում զետեղված են արխիվային մի շարք նյութեր Ստեփան Շահումյանի մասին։ Այդ փաստաթղթերը (թվով 37), որ հրատարակության են պատրաստել Խ. Բարսեղ-

յանն ու Յու. Մռավյանը, ներկայացնում են Շահումյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ ցարական կառավարության պահնորդական բաժանմունքների գրագրությունները ս ցույց են տալիս, թե ինչպես ցարական կառավարության վարձկան լրտեսները հետապնդել են լենինյան տիպի պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներ Ստեփան Շահումյանին։ Փաստաթղթերը, որոնք ստացվել են տարբեր արխիվներից, անշուշտ, նոր ու չափազանց արժեքավոր նյութ կտան Շահումյանի կյանքն ու գործունեությունը հետազոտողներին։ Պետք է ցավել միայն, որ որոշ փաստաթղթեր հրատարակվել են կրճատումներով, մի բան, որից պետք է խուսափի «Բանբերի» խմբագրությունը։

Փաստաթղթերի հրապարակման բաժնում զետեղված են Անտոն Մատաթիա Գարագաշյանի նորահայտ նամակները, որ «Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերության» արխիվային ֆոնդերում հայտնաբերել է Վ. Վարդանյանը։ Նամակները վերաբերում են Գարագաշյանի «Քննական պատմություն հայոց» բառահատոր աշխատության տպագրությունը գլուխ բերելու գործին և որոշ կենսագրական տեղեկություններ են տալիս XIX դարի երկրորդ կեսի արևմտահայ առաջավոր մտածող Գարագաշյանի կյանքի և գործունեության մասին։

Հանդեսի երկրորդ բաժնում զետեղված են արխիվային փաստաթղթերի հիման վրա գրված մի շարք գիտա-հետազոտական հոդվածներ։ Դրանցից երեքը նվիրված են Սովետական Հայաստանի պատմության տարբեր ժամանակների համեմատաբար քիչ ուսումնասիրված որոշ հարցերի։ Հ. Պետրոսյանի հոդվածը լուսաբանում է երրորդ հնգամյա պլանի կատարման համար ռեսպուբլիկայի Կոմպարտիայի պայքարի պատմությունը և աչքի է ընկնում փաստական հարուստ նորություններով։ Հեղինակը նպատակ է դրել ցույց տալ Կոմունիստական պարտիայի ոգեշնչող ու կազմակերպող դերը ռեսպուբլիկայի տնտեսական վիթխարի վերափոխումների մեջ և այդ նրան հիմնականում հաջողվել է։ Հաջողված պետք է համարել և «Սովետական Հայաստանի էլեկտրիֆիկացիայի պատմությունից (1921—1928 թթ.)» պատմագիտական հոդվածը, որը գրել է Հր. Գրիգորյանը։ Հաղորդումների բաժնում զետեղված հաջորդ հոդվածը, որի հեղինակն է Ս. Դավթյանը, հարուստ փաստական տվյալներով տալիս է Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի աճման չափազանց ուշագրավ պատկերը։

Վերևում հիշատակված երեք հոդվածները բնեն նաև թերություններ, որ ամենից առաջ արտահայտվում են ձեռնարկած գործը որոշ դեպքերում մինչև վերջը չտանելու, ընդհանրացումներ կատարելիս քիչ համարձակ լինելու մեջ։ Վերցնենք, օրինակ, Հ. Պետրոսյանի հոդվածը։ Հեղինակը բազմաթիվ դիպուկ փաստերով վեր է հանել ու ընդգծել Հայաստանի սկզբնական պարտիական կազմակերպությունների կատարած դերը ռեսպուբլիկայի երրորդ հնգամյա պլանի կենսագործման համար մղվող պայքարում, բայց պատշաճ կերպով չի խորացել իր բերած ուշագրավ փաստերի ետևում կանգնած գործոնների բացահայտման ու բացատրության մեջ։ Հր. Գրիգորյանը, տալով Հայաստանի էլեկտրիֆիկացման վաղ շրջանի փաստերով հարուստ պատմություն, բավարար չափով չի լուսաբանել ժողովրդական մասսաների դերը ռեսպուբլիկայի էլեկտրիֆիկացման գործում։ Հեղինակի այս վրիպման կապակցությամբ հիշենք, որ Հայաստանի էլեկտրիֆիկացման առաջին բայլերը առաջ բերեցին աշխատավորների մասսայական շարաթօրյակների շարժում Երևանում, Լենինականում, Ալավերդում, Զափանում։ Շարժումը քաղաքներից անցավ գյուղը և լայն տարածում գտավ ամբողջ ռեսպուբլիկայում։ Ը դեպ, ժողովրդական մասսաների շարժումը պատշաճ խորությամբ չի լուսաբանվել և Ս. Դավթյանի հոդվածում։ Անդրադառնալով սոցիալիզմի ժամանակ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի աճման պատմությանը, հեղինակը տվել է, ինչպես արդեն ասել ենք, փաստական հարուստ նյութ, կատարել է որոշ ընդհանրացումներ, բայց կոլտնտեսային գյուղացիության աշխատանքային ակտիվությունն ու ձեռներեցությունը չի բաշել առաջին պլանի վրա, իսկ գյուղական պարտիական կազմակերպությունների գործունեությունը, որ ամենուրեք Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության բարեկեցության և կուլտուրական մակարդակի աճման գործի խթաններից է եղել, համարյա դուրս է թողել իր տեսադաշտից։

«Բանբերի» երկրորդ բաժնում զետեղված են և հայ ժողովրդի նախասովետական շրջանի պատմության հարցերին վերաբերող մի շարք հոդվածներ, որոնցից առաջինը Վ. Հ. Քալաշյանի «Հայաստանի բանվոր դասակարգի նախապատմության հարցի շուրջը» վերնագիրը կրող հոդվածն է։

Հեղինակը, ինչպես երևում է հոդվածից, ըստ ամենայնի ուսումնասիրել և ուսումնասիրում է Հայաստանի բանվոր դասակարգի պատմության վաղ շրջանը և իր կատարած ուսումնասիրություններով հասնելով որոշ արդյունքների, հանդես է եկել Հայաստանի բանվոր դասակարգի

պատմության վաղ շրջանի հարցերին նվիրված գրականության մեջ տեղ գտած թերի և հակասական կոնցեպցիաների դեմ։

Հանդեսում այնուհետև տպագրված է Ա. Գրիգորյանցի «Արդյունաբերության վիճակը և բանվորների դրությունը Հայաստանում 1910—1914 թթ.» հոդվածը, որ նվիրված է Հայաստանի բանվոր դասակարգի պատմության քիչ ուսումնասիրված էջերից մեկին։ Հեղինակը ցույց է տալիս, որ այն բանից հետո, երբ կապիտալիզմը թևակոխեց իր զարգացման նոր շրջանը՝ իմպերիալիզմի շրջանը, Հայաստանի արդյունաբերության մեջ ևս տեղի ունեցավ կապիտալի համակենտրոնացում ու կենտրոնացում, որի հետևանքով աճեց Հայաստանի բանվոր դասակարգի շահագործման աստիճանը, աղքատացումը, սրվեցին աշխատանքի և կապիտալի միջև եղած հակասությունները։ Հարուստ փաստական տվյալների հիման վրա հեղինակը բացահայտում է առավելագույն շահույթ ձեռք բերելու նպատակին ուղղված կապիտալիստների միջոցառումները, որոնց նպատակն էր մաքսիմալ չափերով շահագործել Հայաստանի բանվոր դասակարգին և երկրի ընդերքի հարստությունները։

Հոդվածում հեղինակն անդրադառնում է Հայաստանի բանվոր դասակարգի տվյալ ժամանակաշրջանի ռևոլյուցիոն պոռթկումների պատմական պրոցեսին, ցույց է տալիս, թե ինչպես ռուսական առաջին ռևոլյուցիայի շլուծված հարցերը այդ շրջանում օրակարգի մեջ են դրվում նոր ուժով, և Հայաստանի բանվոր դասակարգը հետևելով համառուսական պրոլետարիատի օրինակին, չծախսված ուժերի կրակով պատրաստվում է նոր գրոհների։ Հեղինակը առանձնապես ընդգծել է Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավար գերը երկրամասի, այդ թվում և Հայաստանի բանվորական շարժումը կազմակերպելու, նրան նպատակասլաց ուղղություն տալու համար մղվող պայքարում։

«Բանբերի» հոդվածների բաժնում տպված են նաև Մ. Հակոբյանի «Հայաստանի կոոպերացիայի պատմությունից» փոքրիկ հոդվածը, Գ. Հարությունյանի և Վ. Վարդանյանի «Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչությունը և հայ գրողների փոխհարաբերությունը» ծավալուն հոդվածը, ինչպես և երկու հաղորդումներ (Խ. Բաղալյան՝ «Էջեր օտար զավթիչների դեմ հայ և ադրբեջանական ժողովուրդների համատեղ պայքարի պատմությունից» և Պ. Կոկինոս՝ «Սփյուռքահայ կոմունիստների առաջին տպագիր կոչը և նրա պատմական նշանակությունը»)։ Բացի այդ, տպագրված է մեկ գրախոսություն, որը նվիրված է «Արխիվային շինարարությունը Հայաստանում» գրքին։

«Բանբերը Հայաստանի արխիվների» հանդեսի խնդիրն է՝ առաջին պլանի վրա մղել արխիվային փաստաթղթեր հրատարակելու, դրանք գիտական հասարակայնության լայն շրջաններին մատչելի դարձնելու գործը։ Եթե այս արդարացի պահանջներով մոտենանք «Բանբերի» առաջին գրքին և համեմատենք նրա բաժինների բովանդակությունը, կտեսնենք, որ հանդեսի 238 էջից միայն 44 էջն է հատկացված արխիվային փաստաթղթերի հրապարակմանը, մինչդեռ հոդվածներին ու հաղորդումներին հատկացված է հանդեսի ավելի քան 3/4-ը։ Դա, մեր կարծիքով, ճիշտ չէ, որովհետև հետին պլանի վրա է մղում հանդեսի առաջ դրված հիմնական խնդիրը։ Հանդեսը հիմնականում պետք է տպագրի իր մասնագիտացման տեսակետից ինքնատիպ այնպիսի հոդվածներ, որոնք լուսաբանեն արխիվային գործի պատմության, արխիվային տնտեսության բարելավման, առաջավոր փորձի փոխանակման և նման այլ հարցեր։

Հ. ԱՐԱՐԱՏՅԱՆ

Վ. Հ. ԵՂՏՈՒՆԻ, *Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության.* Հատ. Ա, Երևան, 1960, 340 էջ, գինը 13 ռ. 10 կ.։

Պրոֆ. Վ. Ուշտունին նպատակ է դրել երեք հատորով հրատարակել «Ուրվագծեր Հայաստանի (իմա՝ Արևելյան Հայաստանի) գյուղացիության պատմության» աշխատությունը։ Առաջին հատորը, որն արդեն լույս է տեսել և հանդիսանում է ներկա գրախոսության առարկան, ընդգրկում է 1828—1870 թթ., այսինքն՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց սկսած մինչև Հայաստանում գյուղացիական ռեֆորմի անցկացումը, երկրորդ հատորը ընդգրկելու է 1870—1900 թթ., իսկ երրորդը՝ 1900—1917 թթ.։

«Ուրվագծերի» առաջին հատորում հեղինակը համառոտակի կանգ է առնում 1828 թվականից առաջ Արևելյան Հայաստանում գոյություն ունեցող ֆեոդալական հարաբերություն-